

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ՁԵՎԵՐ

Մինչև սույն թվականի հունիսի 30-ը ՀՀ Գիտության պետական կոմիտե անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություններ 2009 թվականի ընթացքում նախատեսվող գիտական միջոցառումների (գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների և երիտասարդական գիտական դպրոցների) կազմակերպման և գիտական գործուղումների ֆինանսավորման վերաբերյալ: Միջոցառման անցկացման ֆինանսական աջակցության հայտը պետք է պարունակի տեղեկատվություն միջոցառման նպատակի, գիտական կարևորության, կազմակերպիչների վերջին տարիների ընթացքում ձեռք բերած արդյունքների, ՀՀ-ում համապատասխան կադրերի կամ դպրոցի առկայության, միջազգային համագործակցության նպաստելու, երիտասարդ մասնագետներ ընդգրկելու աստիճանի, հնարավոր այլ ֆինանսական աղբյուրների առկայության և պահանջվող ֆինանսական ծավալների վերաբերյալ: Միջոցառումների հայտերը լրացվում են ըստ կից ներկայացված ուղեցույցի (հավելված 1.1) և ձևերի (հավելված 1.2): Հայտերի ընտրությունը իրականացվելու է մրցութային հիմունքներով՝ օգտագործելով Գիտության պետական կոմիտեի կողմից մշակված գնահատման չափանիշները: Գիտական միջոցառումների հայտերի լրացման ուղեցույցը և ձևերը տեղադրված են Գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.edu.am գիտություն ենթաբաժնում:

Հավելված 1.1

Գիտական միջոցառումների (գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների և երիտասարդական գիտական դպրոցների) կազմակերպման ֆինանսական աջակցության հայտի լրացման և գնահատման ուղեցույց

Յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի ստորև նշված բոլոր բաղկացուցիչ տարրերը: Առաջարկի գնահատման ժամանակ օգտագործվելու են միայն հայտում ներառված նյութերը: Հայտը չպետք է գերազանցի 5 էջ՝ ներառյալ բոլոր ձևերը: 5 էջը գերազանցող կամ անհրաժեշտ տեղեկատվություն չպարունակող հայտերը համարվում են անվավեր և չեն քննարկվում:

Հայտը լրացնելիս պետք է առաջնորդվել հետևյալ ուղեցույցով՝

1. Տիտղոսաթերթ (1 էջ, ձև 1)

միջոցառման անվանումը,

միջոցառման բնագավառը,

միջոցառման բնույթը՝ գիտաժողով, սեմինար, խորհրդակցություն, երիտասարդական գիտական դպրոց,

կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսները,

անցկացման վայրը, ժամկետները,

մասնակիցների ընդհանուր թիվը,

արտասահմանյան մասնակիցների թիվը,

ԱՊՀ երկրներից մասնակիցների թիվը,

երիտասարդ մասնակիցների թիվը (մինչև 35 տ.)

միջոցառման անցկացման ֆինանսական ընդհանուր ծավալները,

պահանջվող ֆինանսական աջակցության ծավալները,

արտասահմանյան աղբյուրներից ակնկալվող ֆինանսական միջոցները:

2. Միջոցառման անցկացման հիմնավորում (մինչև 2 էջ)

Մանրամասն ներկայացնել միջոցառման նպատակները, գիտական հիմնավորումը, կարևորությունը՝

գիտական և գիտատեխնիկական զարգացման տեսանկյունից, ակնկալվող արդյունքները,

կազմակերպիչների վերջին 3 տարիների ձեռքբերումները, միջոցառման բնագավառի

համապատասխան մասնագետների կամ դպրոցի առկայությունը ՀՀ-ում, միջազգային

համագործակցության նպաստելու աստիճանը և այլն:

3. Միջոցառման ծախսերի նախահաշիվը և ակնկալվող ֆինանսական միջոցները (2 էջ, ձև 2)

Մանրամասն ներկայացնել պահանջվող ֆինանսավորման ծավալների հիմնավորումը և բաշխումը ըստ հոդվածների:

Միջոցառման հայտը գնահատվում է 5-բալանոց համակարգով և ամբողջ թվերով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

• գիտական կարևորության,

• մասնակիցների կազմի,

• համապատասխան մասնագետների կամ դպրոցի առկայության ՀՀ-ում,

- միջազգային համագործակցության նպաստելու աստիճանի,
- երիտասարդ մասնագետների (մինչև 35 տ.) մասնակցության աստիճանի: